թեան աղերսագրոյն՝ զոր առաքեցիք, առանց խառնելոյ և մտանելոյ Հանդիսի մերոյ ուխտաւորացն Հայոց, բաց 'ի մշտնջենաւոր պաշտօնէից Ս. Գերեզմանին։ Եւ ըստ սմին օրինակի՝ կատարեսցին հանդէս՝ և արարողութիւնք ձեր յաւուր տօնի Զատկին ձերոյ՝ առանց մտանելոյ և խառնելոյ ուխտաւորաց՝ համազգեաց և միաբանաց մերոց, բաց 'ի նոցանէ որք կան 'ի սպաս ծառայութեան Ս. Գերեզմանին։ Այսու եղանակաւ յուսալի է մեզ սիրով և խաղաղութեամբ անցուցանել զաւուրս մեր և թողուլ զօրինակ բարի զկնի մեր յաջորդաց մերոց. զի եթէ պատահեսցի 'ի ժամանակին սոյն օրինակ փոփոխումն Զատկի, հետեւեսցին օրինակիս այսմիկ։ Հեռասցին և խափանեսցին այն ամենայն չարիք և անկարգութիւնք եւ փակեսցին դրունք տարապայման ծախուց, մանաւանդ դսրովելի գայթակղութեան, յորմէ ոչ ծնանի այլ ինչ, բայց միայն ինաս և վատահամբաւութիւն՝ եւ այլ ամենայն անբարի գործք, զորս մեք և Սրբազնութիւն ձեր քաջ գիտեմք։

Նկատելով զհանդամանս վիճակին մերոյ և ձեր, ոչ ինչ պատշաճ համարիմ զերդումանն բան 'ի մէջ ածել եւ երդնուլ, այլ եղիցի բանն մեր այսոր՝ այո, եւ ոչն՝ ոչ։ Զի թէպէտեւ անայլայլելի Փրկիչն մեր սակս առաւել կատարելութեան եւ հաւատարմութեան մարդկանց բազում անգամ զերդումն 'ի կիր էարկ, «Երդուաւ Տէր և ոչ եւս զղջասցի», սակայն եւ այնպէս հետեւելով մշտնջենաւոր օրինակի նորա, ահա այսու դաշամբք հաւատեմք և խոստանամք, զի եթէ ոք յերկուց կողմանց, կամ մեք և կամ Սրբազնութիւն ձեր փոփոխել համարձակեսցի, եւ կամ ոչ կամեսցի կալ մնալ 'ի վերայ այնմ ուխտի, որ խաղաղասէր մտօք հաստատեցաւ 'ի միջի երկոցունցս, ուղղակի և կամ անուղղակի, ընդ համազգիս եւ կամ ընդ օտարս, և կամ որ և իցէ եղանակաւ, և կամ նոյն իսկ 'ի մէջ Ս. Երուսաղէմի, նզովք Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի 'ի վերայ նորա, եւ դատապարտեսցի յայսմ աշխարհի և 'ի հանդերձեալն առաջի հրեշտակաց և մարդկան. և յաւուրն դատաստանի և 'ի սոսկալի աստենին Քրիստոսի՝ այնպիսին տացէ պատասխանի իբրեւ թշնամի միաբանութեան և օգտի հասարակաց։